

ԲԱԳԱ ԴԻՒՂԻ ԱՌԵՐՈՒՄԸ

(Շարունակութիւն)

է.

Փոքրիկ Անահիթը: Մանուկների կոսորածը: Ազգակիցների խմբովի
կոսորածը Առաքելի ձեռքով: Մահացած բաղացիների բիւր:

Մութը հասնելուն պէս թուրք ամբոխը ցրուեց, անհետա-
ցաւ, որով միջոց եղաւ պաշարուած հայերին դուրս գալ այ-
րեց և Քեամանդարի գլխով գիշերային մթութեան մէջ փախչել
նախ Ֆրէդէնկայ ռուս գիւղն և այնտեղից Զարդախլու, ուր
ուրբաթ առաւօտ միանում են երեկուայ վերջուած խմբի հետ:

Դրանց հետ փախչում է և Յոհաննէս Շուշանեանն իւր
հնգամեայ Անահիտ դստեր հետ: Սակայն մի ինչ որ հոգեկան
ցնորքի ազդեցութեան տակ նա՝ ջոկնւում է և ընկնում գի-
շերը Բադայ գիւղը, մանում է իւր տունը, ուր քնացրել է մա-
տաղ աղջկանը, պտտուել է գիւղը, տեսել է թուրքերի սայ-
լեր ծանրաբեռնուած աւարով, ապա մինչև առաւօտ հասել է
Զարդախլու և այդ տեղ ուշքի գալով, նոր մտաբերել է Անա-
հիտին, քայց արդէն ուշ էր և Բադայ վերադառնալն վտան-
գաւոր

Աւրբաթ առաւօտ՝ մի քանի թուրքեր Խըննալի գիւղից
աւարի տալով Յոհաննէս Շուշանեանցի ցորենի ամբարը, գըտ-
նում են այդ տանը փոքրիկ Անահիտին և տանում են իրանց հետ:
Շուշանեանցի տանից լինելը պատահմամբ լսելով Համիդ բէգ-
Ջիւլիգադարովը աղջկան ըբրում պահում է իւր մօտ և երբ
հայ խմբի հետ գալիս է Բադլիգ և Տէր Ներսէս Տէր Յարու-
թիւնեանցը, Համիդ բէգը ցոյց է տալի նրա փոքրիկ աղջկանը
և խնդրում է ճանաչել, թէ ով է: Քահանան իսկոյն ճանաչում է,
որ բէգերին քաջածանօթ Յոհաննէս Շուշանեանցի դուստրն է:
Մանկան լացը հանգստացնելու և երեխային պահելու համար

յանձնում են նրան խմբի մէջ եղող Յոհաննէս Շուշանեանցի քրոջը, որ բոլոր ժամանակ իւր հետ պտտեցնում է մանկան մինչև Շամշադին, Ղազախ, Քարվանսարայ և այնտեղից Գանձակ, ուր Մկրտիչ քահանայ Տէր Աստուածատուրեանցի տանը Յօր խնամուելուց յետոյ յանձնւում է իւր ծնողներին: Այս քահանայի ասելով մանկան անունն է Վարդանոյշ:

Այսպէս ուրեմն 1905 թուի նոյեմբերի 23 և 24 թուին, չորեքշաբթի գիշերը և Հինգշաբթի ցերեկ ու գիշեր փախստական բազացիներից մի քանի հարիւր հոգի երկսեռ և ամեն հասակի պատուարուեցին Խաղնի ձորի ժայռապատ այրերում քաղցած, ծարաւ և սարսափահար: Սարսափն այնքան էր ազդեւէ հայ ամբոխի վերայ, որ շատերը կարծես հոգեպէս հիւանդ լինէին: Ապացոյցի համար ես կըբերեմ հետեւեալ փաստերը:

Բայց, Աստուած իմ, ինչպէս սառնութեամբ գրի անցնեմ լսածներս, սրպիտի խօսքերով նկարագրեմ դարհուրելի տեսարանները և քսամների իրողութիւնները:

Չորերում և քարանձաւներում թաղնուած ամբոխը շունչը պահում էր, ձայնը կուլ էր տալի, որ չմատնուի հալածող անգութ թշնամուն: Փոքրիկ ծծկերները չէին հասկանում զրութիւնը, չէին կուլ տալիս իրանց ձայնը. այդ փոքրիկ արարածներին կարծես Աստուած մահուան ճակատագրի համար էր լսօտ աշխարհ բերել այդ անիժեալ օրերում: Ո՞ր սաստը կամ խրատն դուռնակ էր այդ դարհուրելի բոպէին ազդել այդ անմեղ, տհաս, անգիտակ արարածների վերայ: Հէնց դրանից էլ նրանք իրանց լացով կարող էին յայտնել իրանց տեղն և ամբոխին մատնել թշնամու ձեռքը:

Աւտի մեծերի, հասկացողների և հասարակաց կեանքն ազատելու համար հարկաւոր էր միջոցներ ձեռք առնել, և միջոցներ լռեցնելու անհասկացողներին, մանուկներին, ծծկերներին, բոլորովին անմեղ արարածներին՝ կեանքից զրկելով նրանց: Պաշարման անիժեալ բոպէին շատացան մանուկների թշնամիներն ու միայն ամբոխի մէջ, այլ և ծնողների շարքում: Ամբոխն անգթաբար պահանջում էր մահուամբ կտրել ծծկերների ճիւղը և ծնողները կատարում էին այդ պահանջը . . .

Մենք մէջ չենք բերում ծնողների և նրանց խողխողուած և քարերի ու ժայռերի մէջ ձգած ու գահալիժ արած զաւակների անունները:

Այդ մուգնութեան բոպէներին եղել են անձնուէր դժած հայ և թուրք անձինք, որպիսին է Ադամ Բաբայեանցի կինը:

Սարգիս Մակարեանցն անտալով իւր կնոջ՝ մանկան մօր աղեխարշ լացին, իւր 8 օրական Սիմոն որդուն չէ մորթում, այլ փաթաթում է շորերում տէրունական աղօթքը կարդում, խաչակնքում և փակում է ժայռի ծոցում: Հետեւալ առաւօտ քաղաքի Ազամ Բաբայեանցի կինը, որ փախուստի րոպէին կորցրել էր իւր ամուսնուն և ձորում իւր ծծկեր մանկանը կրծքին սեղմած թափառում էր փրկութիւն գտնելու, յանկարծ գուրս է գալի Սարգիս Մակարեանի ձգած մանկան վերայ, մայրական դորովով լի՝ վերցնում է և այդ բեռը և երկու մանուկով յանկարծ գուրս է գալի Բաբայ ու մտնում իւր տունը: Մի դիտաւիրտ թուրք տեսնելով, որ այդ հերոս կինը պահպանել է ոչ միայն իւր այլ և ուրիշի զաւակն, աղատում է դրան միւս թուրքերի մահուան սպառնալիքից և իւր ձիով գիշերը հասցնում է այդ կնոջն երկու երեխայով Ֆրէդէսկայ գիւղը: Ապրտեղական մի ռուսի օգնութեամբ կինը յաջողութեամբ հասնում է Չարդախլու: Այստեղ հանդիպում են Մակարեանց ծնողները, լսում են իրանց զաւակի փրկութիւնը, և լալիս են և ուրախանում, բայց չեն վստահանում վերցնել նրան տիկին Բաբայեանից: Հասարակութիւնը վճռում է, որ մանուկը պատահանում է նրա աղատարար տիկին Բաբայեանցին: Մակարեանց ծնողներն աղերսում են թոյլ տալ պահել, մեծացնել Սիմոնին և էլի յանձնել նրան իւր աղատարարին:

Գրեզոր քահանայ Տէր Աբրահամեանցը Զիաթխան բէգի ղեկը որոնելու ժամանակ պատահամբ գտել է Խազնի ձորում մի քանի կիսակենդան կանանց և երեխանց շարքում նաեւ մի ամուսնան երեխայ, որին վերցնելով բերել յանձնել է նրա փախած ծնողներին:

Այս միայն յայտնիներն են, հապա ռփքան մանուկներ կորած՝ մահացած կլինին, որոնք դեռ ևս յայտնադուր չուած չեն:

Ես կը յիշատակեմ մի ցնցող անցք էլ, որ ունի արտակարգ բնուորութիւն:

Բաղայի նոյեմբերի 23-ի յարձակման ժամանակ մի առիւն փախել են դէպի Խազնի ձորը հետեւալ ազգականները: Առաքել Սարգսեան Աւաղեանց (Կլմանանց), որա մայր Մարիամը. Առաքելի ամուսին Ջաւահիրը, որանց ամուսնացած դուստր Վարինկա, միւս զաւակ Աննա և Մարգարիտ աղջկունք և Յարութիւն, Գարեգին և Իվան աղայքը, Առաքելի հանգուցեալ եղբօր Առուստամի աղջիկը: Այլ և Մարիբէգ Նիկողոսեանց, որա կինը և մի որդին, Աւետ և Մուխի Նիկողոսեանցների կանայք և որանց հինգ զաւակները, Առաքել Նիկողոսեանց իւր

մայր Ազիզը և կինը և այս Նիկողոսեանցներին հօրեղբօր Գասպար Նիկողոսեանցի կին Էլբազը, ընդամենը 24 հոգի մօտ ազգականներ: Խազնի ձորում թագնուած ժամանակ հեռուից հրացանների ձայներ են լսում և ենթադրում են, որ թուրքերը դալու են և իրանց կոտորելու, իսկ պաշտպանութեան համար ունին միայն մի հրացան, որ Առաքել Նիկողոսեանցի ձեռքումն է:

Այս Առաքելն ամբողջ գիշեր հրացանը ձեռքին գետի ափում շարունակ գաղանի պտաւում էր և շուտ—շուտ խորհրդաւոր կերպով շշնջում էր իւր մօր և կնոջ ականջին: Մի շշուշ ընկաւ այդ խմբի մէջ, որ իբրեւ թէ Առաքել Նիկողոսեանցը մտադրւում է բոլոր խումբն ոչնչացնելու, որպէս զի թուրքերի ձեռքը չընկնեն: Առաքելը կոշտ, կոպիտ, կռուարար, գողմարդ էր և խումբն իրաւամբ այդ բոպէին վախենում էր նրանից և մանաւանդ նրա մօրից՝ Ազիզից, որ կարծես խորհրդակից էր Առաքելին: Ո՛ւր դիմել, ո՛ւմ ապաստանել, մի կողմից թուրքն է սպառնում, միւս կողմից կոշտ Առաքելի հրացանը: Աւետը և Մուխին վախել էին ուրիշ կողմի վերայ, Սարկիսէզն էլ մի հեղ և ծաղկից վնասուած աչքերով մօրդ էր, որ մինչև անգամ կարծելով թէ իւր խորթ եղբայր Առաքելն իրան է ուղում սպանել, խնդրում էր իւր խորթ մօրը Ազիզին՝ որ գոնէ խնայէ իւր միակ մանուկ որդուն:

Չանցաւ մի քանի ժամ և ահա Առաքել Նիկողոսեանցը գնտակահար է անում իւր փեսայ Կըլմանանց Առաքելին, ապա որա կնոջն իւր քրոջ Չաւահիրին, իւր խորթ եղբօր Սարկիսէզին, որա կնոջն ու որդուն և այլոց: Այդ սոսկալի տեսարանից դարհուրած՝ Աւետ Նիկողոսեանի կին Մարգարիտն իւր Գրիգոր մանկանը գրգռած 5—6 արշին բարձրութեան ժայռից իրան ձգել է լծացած գետի մէջ յաւ համարելով խեղդուել՝ քան գնդակահար լինել: Սախայն նախախնամութիւնը պահպանում է նրան և նա մագլցելով միւս ափի ժայռը դուրս է գալի և վախշում իւր մանուկով և խառնուելով այլ խմբի հետ հասնում է Չարգախլու:

Ապա գաղանի կերպով վախշում է և ազատւում Գասպար Նիկողոսեանի կին Էլբազը: Մուխի Նիկողոսեանի 5 տարեկան աղջիկն իւր մօր սպանուելուց յետոյ սարսափահար ընկնում է մարդասպանի մօր—Ազիզի գիրկն ու ազատւում է: Եւ այսպէս վերոյիշեալ 24 հոգի խմբից ազատւում են Առաքելի գնդակից միայն եօթ հոգի: Ուրեմն Առաքել Նիկողոսեանցն այդ գիշեր սպանել է տասն և եօթը հոգի իւր ազգականներից:

Այդ ահագին բազմութիւնն ոչնչացնելուց յետոյ Առա-

քելը հանգստութեամբ սկսում է հոգոպտել սպանուածներին, վերցնում է նրանց վրայի երեցող իրերը և յանձնում է իւր կնոջը, հանում է իւր փեռայ Առաքելի վրայից հագուստն և հագնում է ինքը, իսկ իւր հարազատ քրոջ աղջկայ գլխի շալը կապում է իւր վիզը և ապա գիտկները մի տեղ հաւաքած ինքն և իւրայինը հանգիստ կերպով մի այլ խմբի հետ դուրս են գալի Զարգախլու և ապա Բարսում, ուր մնում է բաւականին, բայց անցքի մասին ոչինչ չէ յայտնում: Իսկ հասարակաց կարծիքն ընդունում էր՝ որ 17 հոգի միատեղ սպանուել են թշնամի թուրքերի ձեռքով:

Շատ ժամանակ յետոյ դադանիքը բացւում է երկու աղատուած հարսների-էլքաղի և Մարգարիտի միջոցով: Դաշնակցականները վճռում են կեանքից զրկել Առաքել Նիկողոսեանցին այդ չտեսնուած արարքի համար, բայց նա ազատւում է վրտանդից փախուստ տալով թուրքերի մէջ, ուր, ասում են, արդէն սպանուած է:

Հասարակութիւնը ապշել է այս անցքի վերայ և չգիտէ, թէ որպէս բացատրէ Առաքելի եղերական արարքը, արդեօք կողոպուտի ցանկութեամբ թէ զարհուրելի անցքերից ազգուած խելագարութեամբ:

Իսպառ ոչնչացած այդ գերդաստանները շարքում հարկուոր է դնել Գրիգոր Սարգսեանցի (Աննայեանցի) 5 հոգուց բաղկացած գերդաստանի ջնջումն: Այս միամիտ մարդուն ծայն է տալի Կադիր իւզբաշին թէ Ալլահեար բէգը կանչում է: Գրիգորը հաւատում է և հէնց գերդաստանով ձորից դուրս գալուն պէս ամբողջ գերդաստանով զոհ է գնում Իրմաշլուեցի Մհար Հասան օղլու սրին: Միայն Գրիգորի կենը վիրաւոր մեռած ձեւանալով՝ ազատւում է:

Եւ այսպէս ուրբաթ օրը, Նոյեմբեր 25-ին այնէ Բադայի — աւերման երրորդ օրը գիւղում այլևս ոչ մի հայ չկար: Ամբողջ գիւղը զրկուած իւր հարազատ ընտանիքներից, մատնուել էր հրոսակների խմբերին, որոնք տէր էին դարձել հայերի գիղած հարստութեանը և առանց քաշուելու, առանց երկիւղի թէ հայերի և թէ բարեխնամ կառավարութեան տեղական իշխանութիւնների կողմից, կրում տանում էին իրրեւ սեպհականութիւն հարուստ գիւղի ունեցածը: Նոր տէրերն ամենեւին չէին շտապում, հանգստութեամբ էին գործ տեսնում և կրում էին ինչքը ընտրութեամբ, այսինքն նախ թեթեւ բաները, ապա քիչ ծանրերը (ցորեն ևն.) և վերջն արդէն շինութեան փայտեղէն մասը, դռներ, գերաններ, տախտակներ, և այլն: Եւ այս հանգիստ աւարը շարունակուեց երեք ամիս:

երեք օրում, նոյեմբերի 23, 24 և 25, այսինքն քանի օր որ շարունակուեց կռիւն և հայերի փախուստը, Բաղայում, Գոմերում և Խազնի ձորում ընդամենը, ինչպէս ցոյց են աւելիս ժողոված տեղեկութիւնները, մահացել են մի հարիւր տասն և վեց (116) երկուս և զանազան հասակի հոգիք: Այս կորուստը կվերաբերի բազմաթիւ գերդաստանների, այսինքն կան գերդաստաններ, որոնք զրկուել են մի կամ երկու անդամից, կան որ մարդկային կորուստ չեն ունեցել: Բայց երեք դեր-դաստան ըստ անդամներով խալառ ոչնչացել են: Սրանք են վերը յիշատակուած Առաքել Աւագեանց (Կըլմանանց) կոտորած իւր աներձագ Առաքել Նիկողոսեանցի ձեռքով: Սարիբէկ Նիկողոսեանց՝ կոտորած իւր խորթ (երկրորդ մօրից) եղբայր նոյն Առաքել Նիկողոսեանցի ձեռքով և Գրիգոր Սարգսեան (Աննայեանց) կոտորած Կազիր իւզբաշու նենգու թեամբ և Մհար Հասան օղլու ձեռքով:

Ը.

Բաղացիների փախուստը դեպի Չարդախլու եւ այլ գիւղեր, դիմումն Գանձակի գեներալ-նահանգապետ գեներալ-լեյտենանտ Ֆիլշերին եւ Կովկասի Փոխարքայ Կոմս Վարանցով-Դաւիթովին:

Փախստական ժողովրդի ամենախոշոր մասը ճանապարհ ընտրեց դէպի Չարդախլու և հետեւապէս միւս հայ գիւղերով դէպի Գանձակ: Չարդախլուի հասարակութիւնն, որ նոյնպէս նեղ դրութեան մէջ էր, երկու անգամ արգէն ենթարկուել էր թշնամու յարձակման և երկու անգամն էլ հերոսաբար կարողացել էր անդրադարձնել թշնամուն մեծ կորուստ տալով նորան, կարեկցաբար ընդունեց փախստական հալածուածներին, առժամանակ պատուաւորեց նրանց իւր բնակարաններում և կարելոյն չափ ոահմանափակեց նրանց քաղցն ու ծարաւը:

Կարեկից ժողովրդի պարագլուխներն էին Գէորգ քահանայ Մանասեանց, Մակար քահանայ Տէր-Ստեփանեանց, տանուտէր Պետրոս Բաբաջանեանց, Խաչատուր Գասպարեան և այլք, որոնք իրանցից ոչխարներ էին մորթում և հասարակաց բացօգեայ սեղանի վերայ կերակրում համայն փախստականներին:

Վերջիններս մի առժամանակ մնալով Չարդախլուում, սրտով այրւում էին իրանց հայրենիքի վերայ, իրանց քայքայուած օջախի վերայ, մանաւանդ իրանց մերձաւորների վերայ, որոնք սպանուել, մնացել էին դաշտերում և քարանձաւ-

ներում՝ իբրև թռչնոց և դազանների կերակուր: Բազայի աւերումից 8—10 օր յետոյ մի քանի բազայիներ մտադրուեցին վերադառնալ միասին գիւղը, տեսնել նրա դրութիւնը, արտառութեամբ թափել անցեալ ժամանակի վերայ և, եթէ հնարաւոր լինի, թաղել իրանց հարազատների դիակները:

Եւ անձնական ապահովութեան համար նրանք նախապէս դիմեցին Սլաւեանկա ռուս գիւղում գտնուող կազակների օգնութեան, որոց գլխաւորն էր հայազգի Ալլահվերդովը: Յիտուն կազակների հովանաւորութեան ներքոյ բազայիք վաղ առաւօտ ժողովուեցին հանդուցեալների նշխարները տանել ամփոփելու: Եւ այդ ժամանակ գիւղի փողոցներում շինութեան փայտերով բարձած կանգնած էին 45—50 սայլեր, որոնց թուրք տէրերը կազակների ահից փախել թագնուել էին: Այդ միջոցին յանկարծահաս երեւաց Բազայում Ալլահեար բէդ Չիւլգադարովն սպիտակ շորերով, շրջապատուած թուրք ձիաւորներով: Սրա ներկայութիւնից թագնուած թուրքերը սիրտ առան և դուրս եկան և կազակների քիչ հեռանալուց օգտուելով սկսեցին հրացաններ արձակել հայերի վերայ: Լուռ հանդիսատես կազակները բացատրեցին, որ իրաւունք չունին դէնքով խառնուելու, որից ստիպուած՝ հայերը դադարի մէջ թողնելով Պօղոս Եաւրեանցի դիակը և միւսների փշրանքները՝ փախան Չարդախու:

Բազայիք տեսնելով Չարդախուի վտանգաւոր դրութիւնը մտադրուեցին հեռանալ դէպի Չափը ու Գանձակ, բայց դիւշանելով Չարդախուեցոց թախանձանքին, նորից մնացին, որպէսզի կռիւների ժամանակ օգնական լինեն: Իսկ Չարդախուեցիք որոշեցին դիմել Գանձակի գէներալ Նահանգապետին և թուրքերի յարձակման դէմ զօրք խնդրեցին: Խնդիրը յանձնուեց բազայի Մեսրոբ քահանային, որ երկու հայ ուղեկիցների հետ ծալտեալ բնիւս ճանապարհ: Այդ միջոցին Չափը դիւղի հասարակութիւնը թուրքերի յարձակումից վախենալով խմբովին տեղափոխուում էր Բարսում և Գառնակէր գիւղերը:

Երկուշաբթի, նոյեմբերի 28-ին, Մեսրոբ քահանան ներկայացաւ Գանձակի յաջորդ Կորիւն վարդապետին, որի միջնորդութեամբ և գէներալ Նահանգապետ գէներալ Ֆլէյշշերին: Գէներալը ապշած լսում էր քահանայի բերանացի զեկուցումը Բազայի թարմ կորստեան և Չարդախուի պաշարուած դառը վիճակի մասին, անգամ ղ ժողարութեամբ էր հաւատում պատմութեան և զարմանում էր, որ մինչև այդ ըսպէն ոչինչ չէ իմացել ոչ տեղական ռուսականութիւնից և ոչ Ալլահեար բէդից, որ երկու օր առաջ իւր մօտն է եղել:

Գէներալ Ֆլէյշշերը նոյն օրը կազազրեց, որ մի զօրաբաժին

մի թնդանօթով հապճեպ գնաց երկաթուղով Դալլար և այնտեղից Զարգախու: Զօրաբաժինը ճանապարհ ընկաւ հետևեալ օրը, երեքշաբթի, նոյեմբերի 29-ին, որոնց հետ և Մետրոք քահանան թուրքերից ապահով կարողացաւ հասնել նոյն օրը Թիֆլիզ:

Դեկտեմբերի 1-ին, հինգշաբթի օրը Մետրոք քահանան երկու հայ պարոնների առաջնորդութեամբ ներկայացաւ Թիֆլիզի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանին, որն իւր կողմից ներկայացրեց քահանային իւր առաջնորդներով հանդերձ Վեհափառ Հայրապետ Խրիմեանին, որն այդ միջոցում Թիֆլիզում էր: Վեհափառ Հայրապետը խիստ յուզուած ունին դրեց Մետրոք քահանի սրտածմելի պատմութեանը Բաղայի սոսկումսերի մասին, ժողովրդի դառնադէտ վիճակի մասին և արտասուեց: Մետրոք քահանայի ցնցոտիները տեսնելով՝ Վեհափառը հրամայեց հազուստ կարել տալ նրա համար, կարևոր ծախսերն ապահովացնել, նուիրելով և իրանից 10 ռուբլի:

Վեհափառ Հայրապետը պատուիրեց նոյնպէս, որ շուտափոյթ հոգան Բաղայի ժողովրդի համար ուղարկել հազուստ, անկողին և այլն, իսկ նպաստամատոյց ժողովը յատկացրեց 5000 ռուբլի ալիւր գնելու:

Նոյն 1905 թուի Դեկտեմբերի 3-ին Մետրոք քահանան առանձին խնդրագրով ներկայացաւ Փոխարքայի արքունիք, ուր Փոխարքայի տեղ ընդունեց նրա օգնական գեներալ Մալաման:

Խնդրագիրը կարգաւուց յետոյ գեներալ Մալաման գանազան հարցեր առաջարկեց քահանային: Քահանան բանաւոր կերպով խնդրեց կարգադրութիւն անել աղատելու այն 800 հոգի գերիններին, որոնք տարուել էին Խըննալի գիւղն և թէ այդ գործը կարող է գլուխ բերել միայն Ալլահեար բէգն, եթէ Թիֆլիզից նրան հրաման գնաց: Գեներալ Մալաման խոստացաւ անյապաղ կատարել վերջին խնդիրն, իսկ գրաւոր խնդիրն ուղարկութեան առնել:

(Շարունակելի):

Քաջբերանի

